**Հավելված**

**2020թ. փետրվարի 3-ին**

**կնքված N O-09.06.01/22 պայմանագրի**

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ու Մ Ն Ե Ր

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | գումար (դրամ) |
| 1. | Դպրոցականների օլիմպիադաների անցկացում /ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված «ՀՀդպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման» կարգով/ | Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **դպրոցական փուլի** օնլայն կազմակերպում 7 առարկաներից: | **- 2020թ. հունվարին կատարվել են հետևյալ աշխատանքները՝**<br>- 2019թ. դեկտեմբերին անցկացված դպրոցական փուլի յոթ առարկաների պատասխանների թերթիկներն ըստ ընթացակարգի հավաքագրվել են և ստուգող-մշակող հանձնաժողովի կողմից ստուգվել են համապատասխան հատուկ սարքերի և ծրագրի միջոցով այդ նպատակով առանձնացրած սենյակում,<br>- ստուգման արդյունքները ամփոփվել են և հրապարակվել www.olymp.am կայքում,<br>- դպրոցական փուլի արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների:<br>- **2020թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները՝**<br>- ՀՀ դպրոցներից հավաքագրվել են օնլայն ձևաչափով անցկացվող 7 առարկաների մասնակիցների ցուցակները, նրանց տրվել են անձնական համարներ և ցուցակները տեղադրվել են կայքում,<br>- տպագրվել են առաջին և երկրորդ փուլերի համար անհրաժեշտ քանակի պատասխանների ձևաթղթեր, որոնք բաժանվել են ըստ դպրոցների,<br>- համաձայն ընթացակարգերի կազմակերպվել են մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի, աշխարհագրության օլիմպիադաների դպրոցական փուլերը և հավաքագրվել պատասխանների թերթիկները, | Շնորհալի և ստեղծագործ կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերում, նրանց մոտ ուսումնական առարկաների նկատմամբ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացում, մասնագիտական կողմնորոշման խթանում: | ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պատասխանների թերթիկներից 14000 հատը ստուգող-մշակող հանձնաժողովի կողմից ստուգվել են համապատասխան հատուկ սարքերի և ծրագրի միջոցով այդ նպատակով առանձնացրած սենյակում: | | | |
| 2. | | Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **մարզային փուլի** օնլայն կազմակերպում 7 առարկաներից և մյուս 9 առարկաներից: | **-2020թ. հունվար-փետրվար ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները՝**<br>- 2019-2020 ուստարվա հանրապետական օլիմպիադաների «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» և «Աստղագիտություն» առարկաների մարզային փուլի մասնակիցների ցուցակների հրապարակում www.olymp.am կայքում,<br>- «Մաթեմատիկա» առարկայի 5-7-րդ դասարանների և կենսաբանություն առարկայի մարզային փուլերը կազմակերպվել են այնպես, ինչպես դպրոցական փուլի աշխատանքները՝ բոլոր մարզերին բաժանվել են համապատասխան քանակությամբ պատասխանների թերթիկներ, հավաքագրվել են և ստուգվել հատուկ ծրագրի և սարքերի միջոցով, արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների,<br>- յոթ առարկաների գծով կատարվել են մարզային փուլի կազմակերպման և համակարգման աշխատանքներ /ճշգրտվել են մասնակիցների անվանացանկերը և դրանք տեղադրվել են olymp.am կայքում, առաջադրանքները, լուծումները, ստուգման չափանիշները և պատասխանները ուղարկվել են մարզային կոորդինատորներին, մարզային հանձնաժողովների կողմից մասնակիցների աշխատանքները ստուգելուց հետո արդյունքները հավաքագրվել են, մշակվել են ըստ միավորների, որից հետո ճշգրտվել են հանրապետական փուլի մասնակիցների անվանացանկերը/,<br>- մյուս 9 առարկաների օլիմպիադաների մարզային փուլը կազմակերպելու համար այդ առարկաների հանրապետական հանձնաժողովների կողմից կազմած առաջադրանքները, լուծումները, ստուգման չափանիշները և պատասխանները | | ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2020թ. հունվարի 25-ից փետրվարի 13-ը/ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ուղարկվել են մարզային կոորդինադորներին, հավաքագրվել են այդ առարկաներից հանրապետական փուլ անցած մասնակիցների ցուցակները և տեղադրվել olymp.am կայքում,<br>- բոլոր օլիմպիադաները կազմակերպվել են ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ժամանակացույցին համապատասխան: | | | |
| 3. | | Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **հանրապետական փուլի** կազմակերպում 16 առարկաներից: | -**2020թ. փետրվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները՝**<br>- 2019-2020 ուստարվա հանրապետական օլիմպիադաների 16 առարկաների **հանրապետական** փուլի մասնակիցների ցուցակների հավաքագրվել և հրապարակվել է www.olymp.am կայքում,<br>-Օլիմպիադաները կազմակերպելու համար ձեռք են բերվել՝ ծածկագրված տետրեր, գրիչներ, A4 ֆորմատի թղթեր, դիպլոմներ, գովասանագրեր և մասնակցության վկայականներ,<br>- պատճենահանվել և օլիմպիադաների մասնակիցներին են բաժանվել առաջադրանքները,<br>- օլիմպիադաների մասնակիցների համար կազմակերպվել են գիշերակացի և սննդի ծառայություններ,<br>- ապահովվել է գիշերող մասնակիցների և հանձնաժողովների անդամների տեղափոխումը,<br>- «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների փորձարարական փուլերի համար ձեռք են բերվել անհրաժեշտ լաբորատոր նյութեր և սարքեր,<br>-հանձնաժողովների անդամների հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր և վճարվել են աշխատավարձեր /յուրաքանչյուր տետրի ստուգման համար 3000 դրամ/,<br><br>- հանրապետական փուլի արդյունքները մշակվել են ըստ առարկաների և միավորների,<br>-արդյունքները հրապարակվել են www.olymp.am կայքում,<br>-բոլոր մասնակիցներին տրվել են մասնակցության | Առարկայական հանձնաժողովների գնահատման հիման վրա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրում: | ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2020թ. փետրվարի 25-ից/: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | վկայականներ,<br>-օլիմպիադաների անցկացման համար հատկացվել են համապատասխան տարածքներ, իսկ ընթացքը վերահսկել են համապատասխան հսկիչ-կազմակերպիչները/:<br>- **փետրվարի 21-24-ին կազմակերպվել է մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>մասնակիցների թիվը՝ 273, որից գիշերող՝ 36,<br>մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 14, 2-րդ կարգի դիպլոմ 20, 3-րդ կարգի դիպլոմ 32, գովասանագիր 29,<br>- **փետրվարի 24-27-ին կազմակերպվել է ֆիզիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>մասնակիցների թիվը՝ 90, որից գիշերող՝ 32,<br>մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 4, 2-րդ կարգի դիպլոմ 3, 3-րդ կարգի դիպլոմ 13, գովասանագիր 16,<br>- **փետրվարի 27-ին կազմակերպվել է աստղագիտություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>-մասնակիցների թիվը՝ 12,<br>մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 3, 3-րդ կարգի դիպլոմ 4,<br>- **փետրվարի 28-ից մարտի 2-ը կազմակերպվել է կենսաբանության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>մասնակիցների թիվը՝ 75, որից գիշերող՝ 26,<br>մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 4, 3-րդ կարգի դիպլոմ 7, գովասանագիր 14,<br>- **մարտի 6-8-ը կազմակերպվել է աշխարհագրության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>-մասնակիցների թիվը՝ 108, որից գիշերող՝ 40, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 4, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 11, գովասանագիր 18,<br>- **մարտի 8-10-ը կազմակերպվել է պատմություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | -մասնակիցների թիվը՝ 106, որից գիշերող՝ 37 ,  մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 9, գովասանագիր 13,<br>- **մարտի 10-11-ը կազմակերպվել է ինֆորմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝**<br>-մասնակիցների թիվը՝ 15,<br>մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 3, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 1, գովասանագիր 4,<br>- **Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. մայիսի 12-ի թ. 583-Ա/2 հրամանի հունիսի 5-ին կազմակերպվել է անգլերեն, գերմաներեն, հայ գրականություն և ռուսաց լեզու առարկաների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ 12-րդ դասարանների համար՝**<br>-մասնակիցների թիվը՝<br>անգլերեն 21, գերմաներեն 20, հայ գրակ. 16, ռուսաց լեզու 16,<br>մրցանակներ՝<br>անգլերեն 1-ին կարգի դիպլոմ 1, 2-րդ կարգի դիպլոմ 3, 3-րդ կարգի դիպլոմ 3, գովասանագիր 4,<br>գերմաներեն 1-ին կարգի դիպլոմ 1, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 2, գովասանագիր 4,<br>հայ գրականություն 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 4, գովասանագիր 2,<br>ռուսաց լեզու 1-ին կարգի դիպլոմ 1, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 2, գովասանագիր 2,<br>- **Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. մայիսի 12-ի թ. 583-Ա/2 հրամանի հունիսի 6-ին կազմակերպվել է հայոց լեզու, ֆրանսերեն, ՀԵՊ առարկաների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ 12-րդ դասարանների համար և քիմիա առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ 11 և 12-րդ դասարանների համար՝**<br>-մասնակիցների թիվը՝<br>հայոց լեզու 28, ֆրանսերեն 13, ՀԵՊ 2, քիմիա 18,<br>մրցանակներ՝ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հայոց լեզու 2-րդ կարգի դիպլոմ 1, 3-րդ կարգի դիպլոմ 4, գովասանագիր 5,<br>ֆրանսերեն 3-րդ կարգի դիպլոմ 2, գովասանագիր 3,<br>քիմիա 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 4, 3-րդ կարգի դիպլոմ 3, գովասանագիր 2,<br>ՀԵՊ 1-ին կարգի դիպլոմ 2:<br>- **Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. նոյեմբերի 9-ի թ. 1533-Ա/2 հրամանի նոյեմբերի 22-29-ը կազմակերպվել է «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Անգլերեն», «Գերմաներեն», «Ֆրանսերեն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «ՀԵՊ» առարկաների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ 8-11-րդ դասարանների համար՝**<br>-մասնակիցների թիվը՝<br>հայոց լեզու 51, հայ գրակ. 60, անգլերեն 32, գերմաներեն 27, ֆրանսերեն 27, ռուսաց լեզու 54, քիմիա 42, ՀԵՊ 80,<br>-մրցանակներ՝<br>անգլերեն 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 9, 3-րդ կարգի դիպլոմ 11, գովասանագիր 8,<br>գերմաներեն 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 3, գովասանագիր 5,<br>հայ գրականություն 1-ին կարգի դիպլոմ 1, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 8, գովասանագիր 9,<br>ռուսաց լեզու 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 7, գովասանագիր 17,<br>մրցանակներ՝<br>հայոց լեզու 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 6, գովասանագիր 13,<br>ֆրանսերեն 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 1,<br>քիմիա 1-ին կարգի դիպլոմ 3, 2-րդ կարգի դիպլոմ 3, 3-րդ կարգի դիպլոմ 3, գովասանագիր 8:<br>ՀԵՊ 1-ին կարգի դիպլոմ 9, 2-րդ կարգի դիպլոմ 6, 3-րդ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կարգի դիպլոմ 8, գովասանագիր 28: | | | |
| 4. | | ՀՀ առարկայական միջազգային թիմերի նախապատրաստում /Միջազգային թիմերի հավակնորդների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և ՀՀ դպրոցականների միջազգային օլիմպիադաների մասնակիցների ընտրություն/ | -միջազգային օլիմպիադաների 6 առարկաների հանրապետական փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրների հետ մարտ, ապրիլ մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին կազմակերպվել են լրացուցիչ պարապմունքներ,<br>-պարապմունքների ընթացքում կազմակերպվել են գրավոր աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա ձևավորվել են ՀՀ դպրոցականների միջազգային օլիմպիական թիմերը,<br>- տրամադրվել են սենյակներ, լաբորատորիաներ, փորձեր կատարելու համար անհրաժեշտ սարքեր-սարքավորումներ, նյութերի ու այլ պարագաներ: | -թիմային կազմի և թիմային աշխատանքի ստեղծում,<br>- հանգիստ պայմաններում արդյունավետ աշխատանք | ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /նախնական՝ 2020թ. մարտ-հուլիս/ | |
| 5. | Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում | Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում | -նկատի ունենալով աշխարհում տիրող կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) իրավիճակը դպրոցականների առարկայական օլիմպիադաների միջազգային կազմկոմիտեները որոշում կայացրեցին օլիմպիադաների ժամկետների փոփոխության մասին: Մասնավորապես «Ֆիզիկա և «Աշխարհագրություն առարկաների 2020թ. միջազգային օլիմպիադաները չեն կազմակերպվել, իսկ մյուս 5 առարկաների օլիմպիադաները կազմակերպվեցին օնլայն ձևաչափով՝ հատուկ պայմաններով: ՀՀ թիմերը մասնակցել են կազմակերպված բոլոր 5 օլիմպիադաներին:<br>-փոխանցվել են թիմերի մասնակցության համար պահանջվող գումարները,<br>-օլիմպիադաները օնլայն կազմակերպելու համար ձեռք են բերվել համակարգիչներ, տեսախցիկներ, անհրաժեշտ նյութեր և սնունդ,<br>- հինգ առարկաների միջազգային օլիմպիադաներին մասնակցել են ՀՀ 22 դպրոցականներ և թիմերի 10 ղեկավարներ,<br>- 22 մասնակիցներից 16-ը արժանացել են մեդալների՝ 1 ոսկի, 7 արծաթ և 8 բրոնզ, իսկ մեկ մասնակից արժանացավ գովասանագրի: | - միջազգային օլիմպիադաներին ավելի արդյունավետ մասնակցություն,<br>- ձեռք բերված արդյունքների համեմատում նախորդ տարիների արդյունքների հետ<br>- հաղթող մասնակիցների հետ պարապմունքներ անցկացնող մասնագետների խրախուսում: | ըստ միջազգային առարկայական կազմկոմիտեների հաստատած ժամանակացույցի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Մաթեմատիկա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաների օլիմպիական խմբակների ղեկավարների վերապատրաստում | Բոլոր մարզերում մաթեմատիկա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաների օլիմպիական խմբակների ղեկավարների վերապատրաստում | - **փետրվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները**<br>- 9 մարզերից հավաքագրվել են վերապատրաստման ներկայացվող մասնագետների ցուցակները՝ մաթեմատիկայի խմբում ընդգրել է 16 մասնագետ, ֆիզիկայի խմբում ընդգրկվել է 12 մասնագետ, կենսաբանության խմբում ընդգրկվել է 14 մասնագետ,<br>- **մարտ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները**<br>-կազմվել են մաթեմատիկայի, ֆիզիկայի և կենսաբանության օլիմպիական խմբակների ծրագրեր, որոնք ուղարկվել են խմբերում ընդգրկված մասնագետներին,<br>- **մայիս և հունիս ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները**<br>-խմբերում ընդգրկված մասնագետների հետ կազմակերպվել են հեռավար պարապմունքներ /օգտագործելով սկայպի, էլփոստի, կամ այլ կրթական հարթակի և համացանցի հնարավորությունները/,<br>- **հուլիս-դեկտեմբեր ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները**<br>-խմբերում ընդգրկված մասնագետների հետ կազմակերպվել են հեռավար պարապմունքներ /օգտագործելով սկայպի, էլփոստի, կամ այլ կրթական հարթակներիի և համացանցի հնարավորությունները/: | -յուրաքանչյուր մարզում ունենալ բարձր որակի առարկայական օլիմպիական խմբակների ղեկավարներ: | 30.12.2020թ. | |
| 7. | | olymp.am կայքի վարում, համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և այլն | - **կատարվել են հետևյալ աշխատանքները՝**<br>-olymp.am կայքի թարմացում, օլիմպիադաների մասին տեղեկությունների, արդյունքների, հայտարարությունների տեղադրում:<br>-«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն», «Աշխարհագրություն» առարկաների օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի կազմակերպում համացանցի օգտագործմամբ,<br>-համեմատական վերլուծությունների կատարում,<br>-Հանրապետական օլիմպիադաների մասին ամբողջական տեղեկատվությունների տեղադրում /ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ, ընթացակարգեր, տարբեր փուլերի մասնակիցների անունները, առաջադրանքներն ու պատասխանները, արդյունքները, դիպլոմակիրները/ | Օլիմպիադաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրությունների ստեղծում և զարգացում: Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին լիարժեք տեղեկությունների ապահովում և անհրաժեշտ նյութերի և առարկայական օլիմպիադաների գրքույկների | 2020թ. հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | olymp.am կայքում,<br>-olymp.am կայքում տեղադրվել են լրացուցիչ պարապմունքների, թիմերի կազմավորման համար անցկացվող մրցույթների մասին հայտարարություններ,<br>- լուսաբանվել են «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» և «Կենսաբանություն» առարկաների օլիմպիական խմբակների ղեկավարների վերապատրաստման աշխատանքները,<br>- տեղադրվել են միջազգային օլիմպիադաներին մասնակցող ՀՀ թիմերի մասին ՀՀ ԿԳ նախարարի հրամանները, անվանական ցուցակները,<br>- միջազգային օլիմպիադաների անցկացման օրերին կայքում պարբերաբար տրվել է տեղեկատվություն օլիմպիադաների ընթացքի, մեր թիմերի անդամների արդյունքների, արժանացած մեդալների մասին:<br>Պատրաստվել է 2019-2020 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:<br>Տպագրվել են «Քիմիայի հանրապետական օլիմպիադաների խնդրագիրք» և «Ֆիզիկայի խնդիրների ժողովածու 7-9-րդ դասարանների համար» ժողովածուները: | հրատարակում: | | |

Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի տնօրեն՝ Հ.Նավասարդյան

14.01.2021թ.